




ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱԺԱՆ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՊԱՊԵՏԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ

Ինձի կթվի թե շատերուս, մանավանդ նորահաս սերունդի մտքին մեջ Կոմիտաս վարդապետի կերպարը,—անձնավորությունը,—կպատկերացվի իբրև հեքիաթային դեմք, կամ անցյալի երազային հուշ ու հիշատակ:

Եվ թերևս առոր համար է որ հաճախ ինձմե կսպառվի,—իբրև Կոմիտաս վարդապետին աշակերտած և իր հետ մոտեն շփված մեկը,—հիշատակայից դրվագներ պատմել և ձեր երազային պատկերացումը՝ Կոմիտաս վարդապետի մասին, ավելի «քաղցրացնել»: Ցավալի է ըսել թե Կոմիտաս վարդապետի անձին ու կյանքին շուրջ «հյուսված» են այնպիսի երևակայական պատմություններ, որոնք հեքիաթի սովորական սահմաններեն ալ դուրս կանցնին և անհեթեթության կմոտենան:

Անցած օրերու և դեմքերու շուրջ հուշեր պատմելու դժվարությունը հասկնալի է անշուշտ, որովհետև տեղի՝ և ժամանակի հեռավորության պատճառով՝ մարդկային հիշողությունը հաճախ կաղոտի և ակամա վրիպումներ կուճենա: Ներելի չենք համարեր, սակայն, թոռացիկ ակնարկներով կամ շփոթեցուցիչ ու անհրապական գույներով զարդարել պատմական և իրական դեմք մը՝ ինչպիսին է Կոմիտաս վարդապետը: Այսպիսի «հուշերը» այլևս հուշ ըլլալէ կդադրին և, ավելի շատ՝ փուշ կըլլան:

Մանավանդ, հարյուրամյակի այս տոնական օրերուն, բոլորովին հարկ չկա Կոմիտաս վարդապետի ապրած կյանքին շուրջ սրտամտիկ պատմություններով մեր սրտերը դարձյալ ու դարձյալ ճմլել ու տրորել: Լավ

գիտենք թե Կոմիտաս վարդապետը իր ամբողջ կյանքի ընթացքին անցած է,—ինչպես ամեն մահկանացու,—այս աշխարհի հատուկ ավեն տեսակ խոչընդոտներու ճամփեն: Բայց և այնպես հրաշքն այնտեղ է, որ մարդկային կյանքի ֆիզիկական և հոգեկան այս բազմապիսի վերիվայրումներուն եղթարկված մեկը՝ որ Կոմիտասն է,—նույն այդ կյանքի սովորական արահետեն քալելու փորձությունեն չէ տարված, չէ կլանված,—աչ ընդհակառակը՝ ընթացել է ի՛ր ուղեգծով: Եվ այդ ուղեգիծը եղած է, իր իսկ խոսքերով.—

«Ես տարիներու աշխատանքով շինել եմ իմ ուղեգիծը, ուրկէ ընթացել եմ ցարդ և պիտի ընթանամ ասկէ ետքն ալ, որքան ատեն որ ուժ ունիմ երակներուս մեջ: Ո՛չ մեկ խոչընդոտ չի կարող կասեցնել ինձ իմ առաքելությանս մեջ, որուն նվիրականությանը համոզված եմ բոլոր սրտովս»:

Ուղեգիծը՝ իր տեսիլքի և ներհայեցողության ուղեգիծն էր: Երակներուն մեջէն ճառագայթող այդ անմեկնելի ուժը, հին օրերու առաքելական պատմունճանով՝ պարուրած է իր հոգին, պարուրելով նաև ամբողջ ժողովուրդի մը՝ ավերակներու տակ թաղված ու թմրած հոգին: Կոմիտաս վարդապետ հայրենի հողէն ու հողվրտիքէն հառնող կենսավազ ավիշին իր սիրտը բացած, և այդ ավիշով լիովին լեցված՝ և այլևս երգ ու ձայն ու տաղ դարձած,—մեր հողեղեն շինվածքին ջերմություն և կենդանություն ներշնչած է:

Դարձյալ հրաշքը հոն է, որ իր կյանքի ամենատառապալից օրերուն մեջ իսկ, հիվանդանոցի չորս պատերուն մեջ բանտված՝ իր ազագուն մարմինն էր միայն, որ քսան երկար տարիներ կհամատեր շարժիլ ու թափափիլ աննպատակ։ Որովհետև խոչընդոտ չճանչցող Կոմիտասը, իր առաքելության նվիրականությանը համոզված Կոմիտասը, քսան տարի առաջ՝ արդեն փշրած էր իր մարմնեղեն սահողը, երբ վախճ ու սարսափը ուներ թե իր ուղեգիրը կընդհատի....

Այդ վախի ու սարսափի օրերուն էր, որ Բանկալթիի տունին մեկ անկյունը ծվարած հայր սուրբին միտքը մթագնեցավ, ավաղ.... Սակայն, այդ իսկ պահուն, այդ միտքյան մեջն, Կոմիտաս վարդապետի հրաշափառ հոգին դուրս թռավ իր փշրված պատյանեն, և հեքիաթի կապույտ թռչունին նման՝ թեթեվասան թևեր հագած՝ տարածվեցավ ու թառեցավ աշխարհափշյուռ ու ցիրուցան մեր բեկորներուն և մեր հայրենի երկնակամարին տակ ապրող ու շնչող հոգիներուն վրա՝ իբրև հուսատու պատգամաբեր։

Ահավասիկ այդ հրաշք-թռչունն է որ կը փառաբանենք մենք այսօր, մեծ երախտագիտությամբ։

Մեր խորունկ հուզումը կապրինք անշուշտ, վերհիշելով փոքրիկն Սողոմոնի որություն օրերը, ինչպես նաև իր հետագա տարիներուն. կրած հուսալքումներն ու դառնությունները։ Արդարև մեր սիրտերը կճմլվին, ամեն անգամ որ կանդրադառնանք թե ի՞նչքան տառապակոծ ըլլալու է քսան տարի կապվիլ մարմնին, չարչարվիլ, խաչվիլ։ «Լինել այս աշխարհից, չլինել այս աշխարհում»։

Կոմիտասը՝ առավել քան մարդկային որևէ արարած՝ լիռլի վճարեց իր պարտքը իր ժողովրդին, որպեսզի չպղծվի իր առաքելատիպ ու ամենանվիրական հոգին։ Իր արարչական հոգին, իր անտեսանելի բայց

մշտագո ու մշտահունչ հոգին։ Աստվածարյալ հոգի մը, որ պատկառազորու դրախտներու երևակայական ոլորտներուն մեջ չթափափիր։ Այլ կենդանի ու կենդանարար հոգի մը, որ ամենուր է, ամենահաս ու ամենագոր։ Բավական է որ քանակը մեր կուրծքը՝ սիրով ու նվիրվածությամբ, որպեսզի լսենք Կոմիտասի հայրական քաղցրիկ ձայնը՝ որ մեզ իր ուղեգիրն կկանչե.... Իր բոլորանվեր սրտին յուրաքանչյուր բաբախումներուն հետ, մեր հայեշունչ լեզվի ու երգի դաշնության մեջ ծրարված երկնապարզ ամանան և որ կբաշխե բոլոր անոց որ ծարավը ունին հոգեկան հուզումներու և վերապացության։

Կոմիտաս վարդապետի այս մյուռոնաբույր և հավիտենական պատկերը, — կերպարն է, որ մանավանդ այս օրերուն, կարծես կազդարարե մեզ զգաստ ըլլալ և չտարվիլ հեշտ ու թմրեցնող ճամփաներու խաբուսիկ հմայքեն։ Կանգ չառնել, չկասիլ ոչ մեկ խոչընդոտի առաջ։ Չէ՛ որ ինքն է, — անսկիզբն և անվախճան հայր Կոմիտասը, որ կանգնած Հրազդանի բարձունքին վրա, — ձա՛յն կուտա մեր կանաչ սարերուն և ձա՛յն կառնե մեր ձորերեն ու դաշտերեն, առավոտյան արշալույսին։—

«Օրհնյա՛լ է Աստված...

Հիշյալ է Աստված...»։

Իսկ երբ իրիկունը կմառվի Արարառյալ դաշտին վրա և լուսնկան կթագավորե խաղաղական այդ ժամերուն, — կրկին, «միշտ և հանապազ» կլսվի կոմիտասյան ոգեղինացած շունչը, որ բերկրություն ու բարիք կտեղա մեր նվիրագործված հողերուն ու հոգիներուն վրա, ցնծաճայն երգելով։—

«Հովն անուշ, հովն անուշ,

Էն լուսնկա ծովն անուշ...»։

